

Թիֆլիզ, 4 յունիսի
ԳՐԱԿԱՆ ՖՈՆԴ

Ինչ խօսք, որ ՀՀօն պէտք
է գտնէր ու յայտաբարէր Հայ-
ոց տպագրութեան չորս հա-
րիւրամեակը՝ ինչպէս և արաւ
երէկւան «Հորիզոնում»։ Եւ ահա
առաջներս է այդ մեծ կուլտու-
րական տօնը—ընդհանուր Հայոց
Գրականութեան տօնը, մեծ յի-
շատակների, հոյակապ գործերի,
փառաւոր անունների տօնը։ Տօնը
այն ամեն նւիրականի ու վսեմի՝
ինչ որ կարողացել է տալ և տւել
է Հայ ազգը։ Բարձր ու լուրջ
խորհրդածութիւնների առատ ու
գեղեցիկ նիւթ։ Եւ անկասկած
շատ խօսք կը լինի այդ տօնի
նշանակութեան ու Հայոց Գրա-
կանութեան վրայ. բայց չորս հա-
րիւր տարուց յետոյ Հայոց տպա-
գրութիւնը, Հայոց Գրականու-
թիւնը, ինչ խնդիրներ, ինչ հոգ-
ուեր է հանում մեր տոջեւ Սրանց

հանդէպ էլ պէտք է լինեն այն
առաջարկութիւնները, որոնց մա-
սին խօսում է մեր ընկերը:

Այդ խնդիրներից, այդ հոգսե-
րից մէկը, թերևս կենդրոնական
ու մեծը այն է, որ աշխարհքի
ամեն ծայրում հայ գրովը չի կա-
րողանում նոփրւել գրականու-
թեանը և իր գործով պարապում
է ի միջի այլոց: Յոյս էլ չկայ,
որ կը փոխէի այդ գրութիւնը, ո-
րովհետեւ պատճառը շատ է հիմ-
նական, ազգը փոքր է, ընթերցող
հասարակութիւնը քիչ է, գրակա-
նութեան շուկան—սահմանափակ:
Եյս տեսակ փոքր ազգերի մէջ
գրականութիւնը միշտ պահւում է
անհատի, հասարակութեան թէ
պետութեան՝ արտաքին միջամ-
տութեամբ ու օժանդակութեամբ:
Մեր մէջ էլ մի քանի անգամ
հրապարակաւ խօսք է եղել՝ գրա-
կանութիւնն ապահովելու մի ձե-
զանել, բայց միայն խօսք է ե-
ղել և երբէք գործի չի անցել:
Այժմ պատեհ ժամանակ է և գրա-
կան այս համազգային տօնին
հեշտ կարելի էր մի անգամ ընդ-

միշտ վճռել այդ հին խնդիրը,
հիմնելով ու հաստատելով մի ու-
ժեղ գրական ֆոնդ: Ընդհանուր
Հայոց ազգի հիմնած մի ուժեղ
ֆոնդ—Հայոց Գրականութեան հա-
մար: Այդ ֆոնդը կը փոխէր հայ-
ոց ամբողջ գրականութիւնը:
կեանքի քմահաճոյքներից կազա-
տէր տաղանդաւոր մարդկանց,
խանզարւած հներին գործի կը
դնէր, սկսնակ նորերին ուժ կը
տար ու առաջ կը քաշէր: Դա կը
լինէր առաջիկայ մեծ տօնի ամե-
նագեղեցիկ յաւերժացումը: Եւ
անպատճառ պէտք է լինի այդ
համազգային հոգացողութիւնը՝ ե-
թէ ճշմարիտ է, որ ամբոխներն
ու ժողովուրդները Գրականու-
թեամբ են ազգ դառնում ու
մտնում կուլտուրական ազգերի
շարքը, եթէ Գրականութիւնը ազ-
գի հոգին է, եթէ նրա փառքն ու
պարծանքն է, ինչպէս յայտնի է
լուսաւոր աշխարհըներում ամեն
օր, իսկ մեզանում կը կնւում է
յօրելեանների ժամանակ:

Յովհ. Թումանեանց